**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №: 2**
**10.02.2026 Թ. ԿՆՔՎԱԾ N: ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-26/1-1 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «10» «ապրիլի» 2026 թ.

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԴԱՎ-ԱԼԵՔՍ ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Թ. Ալեքսանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 10.02.2026 թ. կնքված ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-26/1-1 պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 1.3 կետի 1-ին պարբերությունն ընդունել հետևյալ խմբագրությամբ. «1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրին կից համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2026 թ. ապրիլի 16-ը:

1.2 Հաստատել Պայմանագրով կապալային աշխատանքների օրացուցային գրաֆիկը՝ համաձայն N: 1 Հավելվածի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի N:1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ | «ԴԱՎ-ԱԼԵՔՍ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ |
| Երևան, Վարդանանց փակուղի 8 | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Գետաշեն, 8 փ, 1 տ |
| ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| h/h 900018010034, ՀՎՀՀ 00093621 | h/h 220250124553000, ՀՎՀՀ 04434201 |
| Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար | Տնօրեն |
| ------------------- Տ. ՎԱՐԴԱՆՅԱՆ | ------------------- Թ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«10» ապրիլ 2026 թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Արմավիրի ոռոգման համակարգի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքներ | համաձայնագրի կնքման օր | 16 ապրիլի 2026 թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
h/h 900018010034, ՀՎՀՀ 00093621
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

------------------------------ Տ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ԴԱՎ-ԱԼԵՔՍ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Գետաշեն, 8 փ, 1 տ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
h/h 220250124553000,
ՀՎՀՀ 04434201
Տնօրեն

------------------------------ Ռ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
/ստորագրություն/

Կ.Տ